

## ՀԱՅՈՑ ԵՐԳԻ ԱՍՏՈՒԱԾԸ

•

Երաժշտութիւնը համաշխարհային լեզու է: Բայց ամէն երգահան չէ որ գառնում է համաշխարհային: Բարի բնութիւնը շարութեան չափ ժլատ է եքը հանճար է ստեղծաւմ: Անցնում են դաշտերով՝ կանաչ-կանաչ, խոտ, խոտ, խոտ. բայց ահա մի ծաղիկ, դարձեալ խոտ, անսահման կանաչութիւն, բայց ահա մի բոյլ կակաչներ, մի աստղաբոյլ մեխակ ու վարդեր, որոնք նեկտարով են ողողում դաշտերի դառնութիւնը:

Կոմիտասի ծնննդը այդպէս եղաւ...: Հայոց եղեռնը աշխով տեսած, Հայոց մեծ վշտից խելազարուած իմաստունը իր երգերով անկրկնելի է: Կոմիտասը ինքը Հայ ժողովուրդն է: Մեղուի պէս նա տուն էր բերում մեր գեղջողով երգերի նեկտարն ու անշօշափելի մանանան: Կարո՞՞ն է մեղուն քըրէ ծաղիկներից մեղը բերել. ի հարկէ՞ ոչ: Հայ ժողովորդի բազմադարեան երգերը քըրէ վարդեր չէին, այլ իրական, եւ կոմիտասը իր համեմարով ոսկի մեղուի նման հանդիպեց նրանց: Իր հանճարեղ ոգու հենցում ծուլեց Հայ մեղեդու նախանիւթը, հանճանիւթը եւ դուրս բերեց այնպիսի քնչշուրթիւններ, երաժշտական ձեւերի եւ խօսքի այնպիսի յոյզ ու քարմութիւնն, որոնք յարկեցին ոչ միայն իրեն՝ Հայ ժողովորդին, այլև համաշխարհային երաժշտական աշխարհում ազօրքի արժանացաւ Կոմիտասի անունով Հայ ժողովորդի անունը:

Հայ ժողովորդի ապրումները, խոհերը, վշտերը երգերի փոխարկելու համար պիտի գտնուեր այնքան մի մեծ սիրտ, որ կարողանար վերածնել գրեթէ անվերածնելին, այսինքն՝ հարկաւոր էր Կոմիտաս իւր փառահեղ եւ ծիածանանուրդ հանճարով: Մի անգամ էլ լսեցէք գուրանի երգերը, նրանցից յատկապէս մէկը մի վիրխարի պոկէմ է, մի անկրկնելիուրթիւն եւ ընդամենը մի կարն՝ երեք քը չորս քառեականի հառաչանք, որից մարդն զգում է Սիփանայ սարերի վրայ Հայ հորովելի համբոյրի տակ բացուող հողի ակօնների հայրենաւանդ քուրմունքը, վայրի դրախտային լեռնածեթրոնի արմատների խննկարոյրը: Կոմիտասը ինչքան ազգային է, այնքան է համաշխարհային: Ինչպէս աստուածընծայ կալից հանճարեղ բրուն է արցունիքի կամ զինու նրբաշուրթ գաւառներ կերտում, արարում, այդպէս է կերտել Կոմիտասը իր անկրկնելին, եւ արդէն բոլոր մեծութիւնները այդպէս են ծնուռմ: Այդպէս է ծնուել ինքը՝ Շեյքսպիրը, չե՞ որ նախանիւթեր են ունեցել ե՛ւ «Օքելլօն», ե՛ւ «Համլեթ»ը. այդպէս է ծնուել և կէօթէի



Կ Ո Մ Ի Տ Ա Խ Ա

«Ֆառուսք»ը, որի նախանձիւքը բխել է ժողովրդի երազանքներից: Ինչպէս որ ամէն մի ազգ մեծ է, եթէ իր մշակոյքն է մեծ, այնպէս էլ ամէն մի ազգ անմահ է՝ եթէ պահպանում է իր լեզուն, իր մրցակոյքի ոսկէ աւազանը: Ինչպէս Մեսրոպ Մաշտոցի, Սայար-Նովայի, այնպէս էլ մեծ Թումանեանի եւ ահա Կոմիտասի ու ապա մեծ Խորենացու, մեծ Շիրակացու, աստուածահաննար Նարեկացու եւ այլոց յորելեանները կը դառնան Հայութեան անունը վեր բարձրացնող մարմարէ սանդուխներ, աշխարհով մէկ հայապահապանման մէրտութեան աւազաններ:

Ծագկասի երիտասարդի մահը նման է ծովի պորտում խորտակուող նաւի՝ դեռ չհասած իր երազների ափին: Հապա ինչ-ովիսի դժնատեսնի նաւարեկութիւն է մահը կամ ցնորումը հանճարի, որը գտնուում էր տակաւին երիտասարդ հասակի մէջ: Եւ Կոմիտասի մահը իրաւ, նմանուեց մի ոսկէ նաւի, որը բեռնաբարձուած էր Հայոց երգամշակոյքի ադամանդներով, զիներով, մարգարիտներով, հազար-հազար անգին քարերով: Խորտակուող, սուզուող նաւի նմանուեց Կոմիտասի եւ կոմիտանների կեանքը: Բայց Հայաստանը փինիկուեց առասպելական քոչունի նման, ելաւ կրակէ մոխիրներից եւ այժմ աշխարհով մէկ հնչեցնում է իր երգը, Կոմիտասի երգը...

Թէ չծնուէր մեծ Կոմիտասն իմաստուն՝  
Հայ ժողովուրդն այսէան բարձր չէր լինի,  
Թէ չլինէր Հայ ժողովուրդն աշխարհում՝  
Կոմիտասն էլ այսէան քաղցր չէր լինի:

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Երեւան

